



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



ERASMUS+ CBHE PROJECT # 585760-EPP-1-2017-1-AM-EPPKA2-CBHE-JP
“CHANGE IN CLASSROOM: PROMOTING INNOVATIVE TEACHING
& LEARNING TO ENHANCE STUDENT LEARNING EXPERIENCE IN
EASTERN PARTNERSHIP COUNTRIES”, PRINTeL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄՆԱԴՐԱՄ)

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և
ԴԱՍԱԽՈՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
2019-2021

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ.....	4
2.1 Մասնագիտական բաղկացուցիչ	4
2.2 Դասավանդման տեխնոլոգիական գործիքամիջոցների տիրապետման բաղկացուցիչ:.....	5
2.3 Ընդհանուր պատրաստականության և կրթական բարեփոխումների բաղկացուցիչ:.....	5
3. ԶԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ.....	6
3.1 Արդյունքների հաշվառման մեխանիզմներ.....	7
4. ԶԱՊՅ ՇԿ և ԴՎ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՊԼԱՆԸ և ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՆՉ 2021 ԹՎԱԿԱՆԸ.....	8
5. ԱՄՓՈՓՈՒՄ.....	11
6. ԶԱՎԵԼՎԱԾ.....	14
6.1 Դասընթացների ցանկը	14

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանն ավանդաբար էական նշանակություն է տվել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստմանը, ինչպես նաև որակավորման բարձրացմանը, որը դիտարկվել և դիտարկվում է որպես դասավանդման, ուսումնառության, գիտական, գիտատեխնիկական աշխատանքների որակի և արդյունավետության ապահովման կարևոր գործոն:

2006 թվականից, երբ բարձրագույն կրթության օրակարգում առաջադրվեց էլեկտրոնային ուսուցման իրականացման խնդիրը, ՀՊՃՀ-ում ձևավորվեցին տեխնոլոգիական կարողություններով դասարաններ, մշակվեցին էլեկտրոնային ուսուցման ապահովման մեթոդական ու ծրագրային միջոցներ և կազմակերպվեցին դասախոսներին հասցեագրված դասընթացներ, ուր 2006-ից առ 2012թ. շուրջ 150 դասախոս ստացավ էլեկտրոնային ուսուցման ռեսուրսների պատրաստման ու դրանցով ուսումնական գործընթացի իրականացման կարողություններ:

Միևնույն ժամանակ վերջին զարգացումները և մարտահրավերները նոր սկզբունքների իրականացման կոչ են անում բարձրագույն կրթության ոլորտում, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների և գնահատման կրեդիտային համակարգի կիրառման գործում, որը հնարավորություն կտա ձևավորել ուսանողների անհատական հետաքրքրությունների և կարիքների, ինչպես նաև համապատասխան մասնագիտական ոլորտների նոր պահանջների համաձայն դասավանդման գործընթաց:

Համաձայն 2012 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման՝ համալսարանի գիտական խորհուրդը հաստատել է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման սկզբունքորեն նոր հայեցակարգ, ուր դասախոսների մասնագիտական որակավորման առաջընթացը համարվում է շարունակական կրթության անբաժանելի մասը:

Ներկայումս ավելի քան 400 դասախոս հաճախում է կենտրոնի դասընթացներին: Դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի պատշաճ կազմակերպման համար մշակվել է հատուկ համակարգ, որի տեղեկատվությունը հասանելի է Կենտրոնի կայքում՝ <http://npua.azurewebsites.net/> հասցեով և համալսարանի կայքի համապատասխան հղման միջոցով՝ https://npua.am/centers/cett_center/cett_center_hs/ :

Կենտրոնը տրամադրում է կրթական ծառայություններ նաև հանրության լայն շրջանակի համար: Մասնավորապես, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ են առաջարկվում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատող քաղաքացիական ծառայողներին, մասնավոր ընկերություններին և գործընկեր կազմակերպություններին: 2012 թվականից սկսած՝ մոտ 2000 մասնակից հաճախել է Կենտրոնի դասընթացներին: Կենտրոնին հաջողվել է ընդլայնել

առաջարկվող դասընթացների և ուսուցումների շրջանակը՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը, ուսանողների ակտիվ ներգրավվածությանն ու մասնակցությանը, համագործակցության հաստատմանը տարբեր պետական և մասնավոր կազմակերպությունների հետ երկրի ներսում և արտասահմանում:

2. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համակարգի բովանդակային կառուցվածքի հենքում դրվում են հետևյալ երեք հիմնական բաղկացուցիչները.

1. մասնագիտական բաղկացուցիչ,
2. դասավանդման տեխնոլոգիական գործիքամիջոցների տիրապետման բաղկացուցիչ,
3. ընդհանուր պատրաստականության և կրթական բարեփոխումների բաղկացուցիչ:

2.1 Մասնագիտական բաղկացուցիչ

Սույն բաղադրիչը ներառում է մասնագիտական հատուկ դասընթացների շարք, ոլորտի առաջավոր ձեռնարկություններում նորագույն ձեռքբերումներին և գործիքամիջոցներին ծանոթանալու հնարավորություն, ինչպես նաև դասախոսների գործունեության համար անհրաժեշտ նոր կրթական ծրագրերի ստեղծում, տեխնոլոգիաների իմացություն և, իրականացվող կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջներով պայմանավորված, որոշակի տեխնոլոգիաների տիրապետում:

Մասնագիտական հատուկ դասընթացներն իրականացվելու են ինչպես ՀՊՃՀ շարունակական կրթության կենտրոնում առկա դասընթացների, այնպես էլ հրավիրված մասնագետների և շարունակական կրթության այլ կենտրոնների կողմից առաջարկվող հեռավար դասընթացների միջոցով:

Ոլորտի առաջատար ձեռնարկություններում ստաժավորումը նպատակ ունի դասախոսներին տալ համատեղ քննարկումների և աշխատանքների միջոցով ոլորտը ծանոթանալու և ուսումնասիրելու հնարավորություն:

Նոր կրթական ծրագրերի ստեղծման տեխնոլոգիաներում նախատեսվում են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված «թյունինգային» մեթոդաբանության ուսումնասիրում և յուրացում, որը դասախոսին անհրաժեշտ է լինելու նոր կրթական

ծրագրերի մշակման կամ առկա ծրագրերի խնդիրների վերանայման եվրոպական արդի պահանջներով լուծելու համար:

Կրթական ծրագրերի իրականացման մասնաբաժինը նախատեսում է ընթացիկ մոնիթորինգների, կրթական վերջնաարդյունքների գնահատման, ինչպես նաև շրջափոխային վերանայումների մեթոդաբանական և տեխնոլոգիական հիմունքների ուսումնասիրում և յուրացում, որոնք անհրաժեշտ են եվրոպական ENQA ստանդարտի տեսանկյունից կրթական ծրագրերի որակի ապահովման համար:

2.2 Դասավանդման տեխնոլոգիական գործիքամիջոցների տիրապետման բաղկացուցիչ:

Համակարգի բովանդակային կառուցվածքի սույն բաղկացուցիչը նպատակաուղղված է դասավանդման և ուսումնառության ժամանակակից տեխնոլոգիական գործիքամիջոցների տիրապետմանը: Սույն գործիքամիջոցները հիմնված են SS ոլորտի նվաճումների վրա: Բաղկացուցիչը պարունակում է տրամաբանորեն իրար հաջորդող երեք փուլեր.

- ❖ SS արդիական գործիքամիջոցների ուսումնասիրություն;
- ❖ կախված դասախոսների մասնագիտական ոլորտի յուրահատկություններից համապատասխան տեխնոլոգիական գործիքների ընտրություն և դասախոսների կողմից վարվող դասընթացների վերաձևակերպում այդ գործիքների օժանդակությամբ;
- ❖ դասախոսների մշակած նյութերի խմբագրում և սահմանված կարգով ներդրում:

2.3 Ընդհանուր պատրաստականության և կրթական բարեփոխումների բաղկացուցիչ:

Այն ներառում է երկու ենթախմբերի բաղկացուցիչներ.

1. ընդհանուր պատրաստականություն;
2. կրթական բարեփոխումներ:

«Ընդհանուր պատրաստականություն» ենթաբաղկացուցիչը պարտադիր կերպով ներառում է մանկավարժական և հոգեբանական հարցերի ուսումնասիրում, ինչպես նաև գործնական օտար լեզվի բարելավումը:

Ի լրումն նշված երկու ենթակետերի՝ այս ենթաբաղկացուցիչում հնարավորություն է տրվում դասախոսներին ծանոթանալ նաև երկրի պատմամշակութային և /կամ սոցիալ-քաղաքական ասպարեզների հարցերին:

Կրթական բարեփոխումների ենթաբաղկացուցիչի ներմուծումը պայմանավորված է Բոլոնիայի գործընթացի պահանջներով և ներառում է հետևյալ կարևորագույն բաղադրամասերը.

- ❖ ստրատեգիական պլանավորում, որի իմացությունն անհրաժեշտ է, որպեսզի դասախոսը հնարավորություն ունենա գրագետ ձևով մասնակցելու ամբիոնի, ֆակուլտետի, համալսարանի ռազմավարական խնդիրների ձևավորմանը և դրանց իրականացմանը;
- ❖ որակի ապահովում, ինչը որպես բարձրագույն կրթության համակարգի ներկայիս կարևորագույն պահանջ նախատեսում է որակի ապահովման ներհամալսարանական համակարգի առանձնահատկությունների ուսումնասիրում և տիրապետում;
- ❖ կրեդիտային համակարգ, որն ուղղված է ՀՊՃՀ-ում ներդրված եվրոպական ECTS համակարգի հետագա բարելավմանը, մասնավորապես համակարգի չօգտագործված հնարավորությունների բացահայտմանն ու ներդրմանը;
- ❖ որակի ազգային շրջանակ, որը հնարավորություն է տալիս հստակորեն պատկերացնել տարբեր մակարդակների կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները և դրանց առանձնահատկությունները, ձևավորել համարժեք կրթական վերջնասարքյունքներ և դրանք համադրել այլ երկրների համարժեք որակավորումների բնութագրերի հետ՝ նպաստելով ուսանողների և դասախոսների շարժունության (mobility) ակտիվացմանը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ):

3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համակարգի կազմակերպական կառուցվածքը ներառում է երկու հիմնական բաղկացուցիչ.

1. արդյունքների հաշվառման մեխանիզմներ;
2. գործընթացի ժամկետային իրականացման սխեմաներ:

3.1 Արդյունքների հաշվառման մեխանիզմներ

Արդյունքների հաշվառման մեխանիզմները հիմնվում են կրեդիտային հենքով կառուցման կազմակերպական սկզբունքների վրա: Այն նշանակում է, որ ծրագրի բովանդակային կառուցվածքում ցանկացած բաղադրամասում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները կամ հմտություններն արժևորվելու է համապատասխան կրեդիտների քանակով: Տարբեր բաղադրամասերից ստացված կրեդիտների քանակը կուտակվում է և ցույց է տալիս, թե որ փուլում է գտնվում տվյալ պահին դասախոսի վերապատրաստման գործընթացը: Կուտակվող կրեդիտները ձեռք են բերվում վերաշարադրված բովանդակային կառուցվածքի երեք բաղկացուցիչներում, որոնք ունեն սահմանված մակարդակի որոշակի անհրաժեշտ քանակներ:

Վերապատրաստման գործընթացի ավարտման անհրաժեշտ պայման է հանդիսանում գումարային 30 կրեդիտների կուտակումը: Սույն ցուցանիշը պայմանավորված է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ ընդունված ECTS կրեդիտային համակարգի չափանիշներով, համաձայն որոնց 30 կրեդիտը մեկ լրիվ ուսումնական կիսամյակի (20 շաբաթ) աշխատածավալն է:

Նշված կրեդիտները պետք է պարտադիր կերպով պարունակեն կրեդիտներ անհրաժեշտ մասնաբաժիններից, ինչպես մասնագիտական բաղկացուցից, այնպես էլ դասավանդման տեխնիկական գործիքամիջոցների տիրապետման և ընդհանուր պատրաստականության ու կրթական բարեփոխումների բաղկացուցիչներից:

3.2 Գործընթացի ժամկետային իրականացման սխեմաներն

Ժամկետային սխեմաներն ունեն հետևյալ առանձնահատկությունները.

1. դասախոսը գտնվում է մրցույթով նոր անցածի կարգավիճակում,
2. դասախոսը գտնվում է պայմանագրի ընթացիկ փուլում:

Առաջին դեպքում նրան անհրաժեշտ է այնպես կազմակերպել իր վերապատրաստման գործընթացի գրաֆիկը, որպեսզի մինչև հաջորդ վերապատրաստումը կուտակի անհրաժեշտ գումարային 30 կրեդիտները: Ընդ որում, կուտակման այդ գործընթացը հավասարաչափ պետք է բաշխվի առնվազն երեք տարիների մեջ: Այն հնարավորություն է ընձեռում դասախոսին իր հիմնական դասախոսական գործունեությանը զուգահեռ առանց լուրջ ծանրաբեռնումների անցնել վերապատրաստման գործընթացը և ձեռք բերել 5 տարով վերակոնտրակտավորման իրավունք:

Սույն համաչափ բաշխումը ըստ տարիների անհրաժեշտ է նաև գործընթացն ապահովող Շարունակական կրթության կենտրոնի հնարավոր գերբեռնվածության երևույթներից խուսափելու համար:

Հարկ է նշել, որ սույն սխեման անցողիկ մի քանի տարիներից հետո դառնալու է վերապատրաստման գործընթացի ժամկետային իրականացման հիմնական սխեմա:

Մոտակա անցումային տարիներին են ծառայելու պայմանագրային ընթացիկ փուլում գտնվող վերապատրաստման գործընթացի ժամկետային իրականացման սխեմաները: Դրանցում նախատեսվում են երկու հնարավոր դեպքեր՝

ա. վերակոնտրակտավորմանը մնացել է երկու տարուց պակաս;

բ. վերակոնտրակտավորմանը մնացել է երկու տարուց ավել:

Առաջին դեպքում առաջարկվում է պայմանական երկարացնել դասախոսի աշխատանքային պայմանագիրը մեկ տարով՝ հնարավորություն տալով այդ ընթացքում լրացնել անհրաժեշտ գումարային կրեդիտները, այն հասցնելով 30-ի:

Երկրորդ դեպքում, երբ վերակոնտրակտավորմանը մնացել է երկու տարուց ավել, լրացուցիչ քայլերի անհրաժեշտություն չկա, քանզի այդ ժամանակահատվածում հնարավոր է կուտակել անհրաժեշտ 30 կրեդիտները: Այսինքն, գործում է հիմնական սխեմայի մասնավոր դեպքը, երբ երեք տարվա փոխարեն կրեդիտների կուտակման գործընթացը բաշխվում է վատագույն դեպքում երկու տարիների վրա:

4. ՀԱՊՅ ՇԿ և ԴՎ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՊԼԱՆԸ և ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՆՉ 2021 ԹՎԱԿԱՆԸ

Համաձայն ՀԱՊՀ 2016-2020 թթ. ռազմավարական պլանի նպատակների և հաշվի առնելով PRINTeL նախագծի շրջանակում ՀԱՊՀ աշխատանքային խմբի՝ եվրոպական գործընկեր համալսարանների լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքերը՝ ՇԿ և ԴՎ Կենտրոնի հիմնական ռազմավարական խնդիրն է պատրաստել ժամանակակից բարձր որակավորված դասախոս: Այն իր մեջ ներառում է այնպիսի մասնագետների պատրաստումը, ովքեր տիրապետում և կրթական գործընթացում ներդրում են մանկավարժական նոր հեռանկարային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների բովանդակության արդիականացման և պատշաճ կազմակերպման միջոցով՝ պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացումը մասնագիտական շարունակական կատարելագործման և պրոֆեսիոնալիզմի աճի նկատմամբ:

Կենտրոնի առջև խնդիր է դրվել ձևավորել լրացուցիչ և շարունակական կրթության արդյունավետ և տնտեսապես շահավետ համակարգ՝ ապահովելով նրա մատչելիությունը հանրության ամենալայն շերտերի համար, նախաձեռնելով և խրախուսելով կրթական նոր տեխնոլոգիաների յուրացումն ու կիրառությունը, առավելագույնս օգտագործել ՀԱՊՀ մասնաճյուղերի ներուժը:

2015 թվականի ՀԱՊՀ գիտական խորհրդի որոշման համաձայն՝ Կենտրոնը ենթարկվում է համալսարանի ռեկտորին, իսկ դասախոսների վերապատրաստման գործընթացի, արտաքին կրթական ծրագրերի և համագործակցության համար պատասխանատու է միջազգային համագործակցության և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը:

Կենտրոնի հաստիքացանկի կազմում են՝ տնօրենը, որն իրականացնում է ընդհանուր ղեկավարումը և պատասխանատու է Կենտրոնի ողջ գործունեության համար, տնօրենի տեղակալը, ով վերահսկում է դասախոսների վերապատրաստման գործընթացը, և երկու ավագ մասնագետ:

Կենտրոնի ավագ մասնագետների գործառույթները ներառում են.

- ❖ Կենտրոնի համակարգիչների ցանցային, ապարատային և ծրագրային համակարգերի անխափան աշխատանքի ապահովումը,
- ❖ նոր սարքավորումների ներդրումը, ինտերնետ պորտալի մշակումն ու սպասարկումը, դասախոսների և ուսանողների տվյալների բազաների հետ կապված աշխատանքների իրականացումը,
- ❖ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի մոնիտորինգը, քննությունների, ավարտական աշխատանքների, ստաժավորման գործընթացի արդյունքների գրանցումն ու ամփոփումը,
- ❖ կրթական գործընթացների բարելավման և հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, ուսանողների և դասախոսների հետ համաձայնագրերի կնքումը, անհրաժեշտ ֆինանսական փաստաթղթերի պատրաստումն ու պահպանումը և այլն:

Վերոհիշյալ ռազմավարական նպատակների հիման վրա ՀԱՊՀ ԾԿ և ԴՎ Կենտրոնի առաջնահերթ խնդիրներն են.

- ❖ իրենց գիտելիքները մշտապես նորացնելու և կատարելագործելու, մասնագիտական աճի մասին հոգալու, մանկավարժական գործունեության անհատական ոճը զարգացնելու նպատակով համալսարանի դասախոսների համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

- ❖ կապված որակավորման մակարդակի պահանջների շարունակական բարձրացման և մասնագիտական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների տիրապետման անհրաժեշտության հետ՝ պրոֆեսորադասախոսական կազմի տեսական և գործնական գիտելիքների կատարելագործումը,
- ❖ հաշվի առնելով արդի գիտության ձեռքբերումները՝ ընդլայնել մասնագիտական գիտելիքները, մասնագիտական գործունեության մեջ տիրապետել նոր արդյունավետ տեխնոլոգիաներին,
- ❖ հաղթահարել մասնագիտական կարծրատիպերը, զարգացնել դասախոսների ստեղծագործական գործունեությունը և վերացնել մասնագիտական վերապատրաստման բացերը,
- ❖ ուսանողների պատրաստման ակնկալվող որակն ապահովելու անհրաժեշտ կրթական գործընթացի կազմակերպման համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական թերությունների հայտնաբերումը,
- ❖ կրթական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիական միջոցների, ինչպես օրինակ, հեռահաղորդակցության և քոմփյութերային տեխնոլոգիաների օգտագործումը,
- ❖ անընդհատ փոփոխվող սոցիալ-տնտեսական և մշակութային պայմաններում արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը,
- ❖ լրացուցիչ գիտելիք ստանալու շնորհիվ մեթոդաբանական մշակույթի ձևավորումը թե՛ հիմնական, թե՛ կրթական փիլիսոփայության բնագավառում,
- ❖ մասնագիտական գործունեության հետագա խնդիրները կանխատեսելու ունակությունների զարգացումը և դրանց լուծման համար առաջադեմ կառուցողական մոդելների մշակումը:

Սկզբունքորեն կարևոր են տեղեկատվության տարբեր աղբյուրների բաց լինելու և մատչելիության մակարդակի բարձրացումը, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար հատուկ տեղեկատվության ապահովումն ու սպասարկումը:

Հատուկ ուշադրություն է դարձվում վերապատրաստվող դասախոսների պատասխանատվությանը՝ վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները և տեխնոլոգիաները իրենց աշխատանքում ներդրմանը:

Համալսարանի դասախոսների վերապատրաստման համակարգը պետք է ներառի մշտական, այդ թվում՝ հեռավար, դասախոսների գործունեության դիտարկումն ու սատարումը:


Կենտրոնի մեկուսացումը հաղթահարելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար պետք է կազմակերպվի միջբուհական ցանց և միջբուհական կրթական համագործակցության հարթակ, ձևավորվի նաև ցանցային կրթական միջավայր՝ նորագույն ձեռքբերումները կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

5. ԱՄՓՈՓՈՒՄ


Ամփոփելով ՀԱՊՀ դասախոսների պարբերական վերապատրաստման կազմակերպական գործընթացների և մեխանիզմների ներկայացված սկզբունքները, որպես հիմնադրույթային, հարկ է ամրագրել հետևյալը.

1. Վերապատրաստման գործընթացը որպես վերակոնտրակտավորման անհրաժեշտ պայման, պարտադիր է ՀԱՊՀ բոլոր դասախոսների համար:
2. Վերապատրաստումն իրականացվում է մինչև վերակոնտրակտավորման սկիզբն ընկած ժամանակահատվածում :
3. Վերապատրաստման գործընթացի կազմակերպական սկզբունքի հիմքում ընկած է ECTS հենքով կրեդիտային համակարգը, որը հնարավորություն է տալիս դասախոսին իր հայեցողությամբ բաշխելու վերապատրաստման ողջ գործընթացն իր առանձին բաղադրիչներով՝ ըստ իր համար նախընտրելի ուսումնական տարիների և կիսամյակների:
4. Վերապատրաստման գործընթացի ավարտական հիմնական ցուցանիշը գումարային 30 կրեդիտների առկայությունն է՝ կուտակված ՀԱՊՀ վերապատրաստման ծրագրի բովանդակա-կառուցվածքային բոլոր բաղադրիչներով:
5. Դասախոսի կողմից իր գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության արդյունքում տպագրված հոդվածները, , գիտաժողովներում ունեցած ելույթները, թեզի պաշտպանումը և ցանկացած այլ նմանատիպ արդյունքները վերապատրաստման գործընթացի մասնաբաժիններ չեն համարվում և, հետևաբար, չեն կրեդիտավորվում: Դրանք կարող են հաշվի առնվել դասախոսների վարկանիշավորման նախատեսվող համակարգում:

Նշենք նաև, որ սույն փաստաթղթում շարադրված ՀԱՊՀ դասախոսների կատարելագործման առաջարկվող նոր՝ կրեդիտահենք, համակարգի բովանդակային և կազմակերպական ելակետային սկզբունքների ամփոփման և դրանց ավելի հեշտ ու պատկերավոր ընկալումն ապահովելու նպատակով, բերվում են հետևյալ երկու գծապատկերները (նկար 1 և նկար 2):



Նկար 1



նկար 2

6. ՀԱՎԵԼՎԱԾ

6.1 Դասընացների ցանկը

1. ԱԷԿ-ում միջուկային և ռադիացիոն վթարների դեպքում բնակչության պաշտպանության հիմնահարցերը
2. Այլընտրանքային էներգիայի աղբյուրներ և էներգախնայող տեխնոլոգիաներ
3. Անարգելք միջավայրի նախագծման նորագույն մեթոդները հիմնախնդիրներ, առանձնահատկություններ, կիրառման կարգ
4. Թարգմանության ժամանակակից մեթոդներ
5. Թվային Հեռուստատեսություն
6. Ժամանակակից բջջային կապ
7. Ինժեներական խնդիրների լուծման կիրառական ծրագրային փաթեթ / Lab View/
8. Ինժեներական խնդիրների լուծման կիրառական ծրագրային փաթեթ / Matlab, Simulink
9. Ինժեներական խնդիրների մոդելավորումը
10. Լեզուների դասավանդման արդի մոտեցումներ և խնդիրներ
11. Կոմպոզիցիոն նյութերի ստացման նորագույն տեխնոլոգիաներ
12. Հայաստանի 3-րդ Հանրապետությունը Մերձավոր Արևելյան քաղաքական հոլովույթում
13. Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը տարածաշրջանային զարգացումների հոլովույթում
14. Հանրահաշիվ և երկրաչափություն
15. Հանքավայրերի արդյունաբերական գնահատման հիմնախնդիրները
16. Հոգեբանություն
17. Ձեռներեցության սկզբունքները
18. Ճարտարագիտական նախագծման համակարգչային տեխնոլոգիաներ /AUTOCAD, 3Dst.MAX, .../
19. Մաթեմատիկական անալիզ
20. Մաթեմատիկական մեթոդները և մոդելները տնտեսագիտության մեջ
21. Մանկավարժություն
22. Ուսուցման նոր տեխնոլոգիաներ և դրանց մեթոդները
23. Տեխնոլոգիական գործընթացների հետազոտման արդի մեթոդները
24. Տեխնոլոգիական գործընթացների մոդելավորումը / Lab View / միջավայրում
25. Տնտեսական գործունեության վերլուծություն, վիճակագրություն
26. Տվյալների հենքեր
27. Քաղաքական կանխատեսումներ և ռազմավարական խնդիրներ
28. Օբյեկտակողմնորոշված ծրագրավորում (C++)
29. Ֆիզիկայի հատուկ դասընթաց 1 (Մեխանիկա և թերմոդինամիկա)
30. Ֆիզիկայի հատուկ դասընթաց 2 (Էլեկտրադինամիկա և օպտիկա)
31. Ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդների կիրառման վերջին նվաճումները